ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1260-Ա

19 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԻ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Երևան քաղաքի Հր. Ներսիսյան փողոցի թիվ 14/1 շենքի թիվ 28 բնակարանի բնակիչ Ֆրեդ Բողոզի Թահմասյանի դիմումը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1981361 տրված՝ 30.08.2005թ., «Ավագ Ավագյան Գագիկի» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 29.07.2026թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04112VWHUJVL, 04112VJGTSDA.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վաղարշապատ համայնքի Ծաղկունք գյուղի Խ.Աբովյան փողոցի թիվ 5 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.
Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ծաղկունք գյուղ, Հ. Թումանյան 2-րդ փողոց, թիվ 5 հողամաս,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ծաղկունք գյուղ, Խ. Աբովյան փողոց, թիվ 5 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Ստորագրված է
19 Օգոստոսի 2026 թվականին
ք.Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1261-Ա

19 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՍԿԵՀԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 04-081-0034-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Ոսկեհատ բնակավայրի Բարեկամության փողոցի թիվ 41 տան բնակիչ Արտակ Սամվելի Ղուկասյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ոսկեհատ բնակավայրի 04-081-0034-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին /հիմք՝ «Երևան» նոտարական տարածքի նոտար Էլմիրա Գևորգի Դանիելյանի կողմից 31.07.2026թ. հաստատված թիվ 17286 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 040225VSXGVU/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր, 19-րդ փողոց,թիվ 32 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
19 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1262-Ա

19 օգոստոսի 2026 թ. · ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Նարինե Վոլոդյայի Զալունցի լիազորված անձ /հիմք՝ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 18.04.2025թ. հաստատված 1768 գրանցամատյանով գրանցված լիազորագիրը/ Արկադի Վլադիմիրի Պողոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Չարենցի թաղամաս թիվ 33 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 17042025-04-0030 տրված՝ 17.04.2025թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011XGNX5MZ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Եղիշե Չարենցի 1-ին թաղամաս, թիվ 33 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ստորագրված է
19 օգոստոսի 2026թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1263-Ա

19 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ռ. ԵՍԱՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 65/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Եսայան փողոցի թիվ 65ա տան բնակիչ Վարդան Հարությունի Մարկոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Եսայան փողոցի թիվ 65/6 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 24022023-04-0063 տրված՝ 24.02.2023թ. և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04011AFHV8L8/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին, Արարատյան փողոց, թիվ 83 շինություն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 04463138 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ստորագրված է
19 օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1264-Ա

19 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՐԻՆԵ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարինե Համազասպի Մանուկյանի լիազորված անձ / հիմք՝ լիազորագիր՝ տրված 13.03.2024թ./ Էմմա Հապետի Արշակյանի դիմումը՝ պարզվել է, որ. համաձայն «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար Յուրա Խաչիկի Եղիազարյանի կողմից 24.11.2025թ. հաստատված 6766 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի և «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 01.07.2026թ. կազմված հատակագծի՝ Վաղարշապատ համայնքի Դողս գյուղում գտնվող բնակելի տունը և օժանդակ շինությունները պատկանում են Մարինե Համազասպի Մանուկյանին,

բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 0.25հա,որի վրա կառուցված է բնակելի տուն և օժանդակ շինություններ,

բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 0.0134 հա սահմանազատված հողամաս, բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ. մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Դողս գյուղում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը, օժանդակ շինությունները և ավել

օգտագործվող 0.0134 հա մակերեսով հողամասը համարել Մարինե Համազասպի Մանուկյանի /ծնված 20.10.1977թ./սեփականությունը:

2. 593 քմ մակերեսով ջերմոցը և 2.5 քմ մակերեսով զուգարանը համարել ինքնակամ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

Ստորագրված է
19 Օգոստոսի 2026 թվականին
ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1265-Ա

20 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 3-րդ գլխի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով և հիմք ընդունելով 20.08.2026թ.-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն սույն որոշման թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թիվ 4 հավելվածների:

2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթը անցկացվում է ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Recoverable Signature

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1266-Ա

20 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

«ԱՐՄԵՆ ՉԻՐՔԻՆՅԱՆ ՄԿՐՏԻՉԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱԿԱՏԻՐՈՋՆ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ (ԿԱՄ) ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ՝ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՆՈՒՅՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄԸ ԿՐԿԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ ՎԻ 21/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 5 հասցեում «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց համապատասխան թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու համար վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում նույն իրավախախտումը կրկին կատարելու վերաբերյալ, պարզեց, որ

«Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատիրոջ (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Բաղրամյան փողոց, 20 փող., թիվ 7 բն., պետ.գրանցման համար՝ 99.1308263/2023-04-03, ՀՎՀՀ՝ 49796293, անձնագիր՝ AV0465863, տրված՝ 05.10.2022 թվականին, 057-ի կողմից, ն/ք՝ 010301182) կողմից Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 5 հասցեում, թույլ են տրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 7-րդ մասի 2-րդ կետով նախատեսված վարչական իրավախախտման հատկանիշներ պարունակող արարքներ, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի 07.08.2026թ. կազմված թիվ ՆԷ-3 և թիվ ՆԷ-4 արձանագրությունների հիման վրա 2026 թվականի օգոստոսի 07-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական

իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված իրավախախտումների փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատիրոջ մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից 07.08.2026թ. կազմված թիվ ՆԷ-3 և թիվ ՆԷ-4 արձանագրությունները:

2. Հանձնաժողովի 18.08.2026թ. թիվ ՎԻ21/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

3.«Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատիրոջ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր քաղվածքը:

4. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 19.05.2026 թվականի թիվ 722Ա որոշումը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 5 հասցեում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում ինչի կապակցությամբ 2026 թվականի մայիսի 6-ին Վաղարշապատի համայնքապետարանում հարուցվել էր վարչական վարույթ, որը ավարտվել էր Վաղարշապատ համայնքի ղեկավարին փոխարինող, առաջին տեղակալի վարույթում քննված թիվ ՎԻ 02/26 վարչական գործով 19.05.2026թ-ին. կայացված թիվ 722Ա որոշմամբ, որով «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը ենթարկվել էր վարչական պատասխանատվության և վարչական իրավախախտման համար նշանակվել էր տույժ:

Չնայած նշանակված տույժին «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 5 հասցեում առանց համապատասխան թույլտվության շարունակել է իրականացնել ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում, այսինքն «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը վարչական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կրկին կատարել է նույն իրավախախտումը, որի վերաբերյալ Վաղարշապատի համայնքապետարանի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից 07.08.2026թ. կազմվել են թիվ ՆԷ-3 և թիվ ՆԷ-4 արձանագրությունները:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի օգոստոսի 07-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 18-ին հրավիրվել է լսում:

Լսմանը ներկայացել է «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը և հայտնել է, որ իրավախախտման պատճառները կվերացնի, ֆինանսական միջոցների պատճառով չի կարող վճարել օրենքով սահմանված տույժերը, խնդրում է մի քիչ մեղմ վերաբերմունք ցուցաբերել:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում իրականացնելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ սույն մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում

ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար, համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով տրվում է հանրային սննդի հասկացությունը, համաձայն որի հանրային սնունդը (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպումն է, իսկ հանրային սննդի ծառայությունը դա սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր է, նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում նշված օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Տվյալ դեպքում՝ «Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատերը, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նար-Դոս փողոցի թիվ 5 հասցեում կատարել է երկու վարչական իրավախախտումներ՝ առանց համապատասխան թույլտվության իրականացրած ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառքի համար տույժի նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը նույն արարքը և առանց համապատասխան թույլտվության հանրային սննդի կազմակերպում և իրացում օրականացնելու համար տույժի նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը նույն արարքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 7-րդ մասի 2-րդ կետով, 23-րդ, 32-րդ և 35-րդ հոդվածներով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Արմեն Չիրքինյան Մկրտիչի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք՝

1) առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու համար 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով,

2) առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպում և իրացում վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելու համար՝ 100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով,

ընդհանուր՝ **400 000 /չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:**

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

Recoverable Signature

Ստորագրող՝
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1267-Ա

20 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԳՈՌ ԱՍԼԱՆՅԱՆ ՆՇԱՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱԿԱՏԻՐՈՋԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ԵՎ ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ (ՀՐԱԺԵՇՏԻ) ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ ՎԻ 22/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 2/8 հասցեում «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց համապատասխան թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք, հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու և առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

«Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատերը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, ք.Էջմիածին, Վիկտոր Համբարձումյան փող., թիվ 3 փակ., թիվ 1 տուն, պետ.գրանցման համար՝ 99.1039835/2018-10-04, ՀՎՀՀ՝ 49624243, անձնագիր՝ AR0657006, տրված 11.04.2018թ., 057-ի կողմից) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 2/8 հասցեում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին, 7-րդ և 8-րդ մասերով սահմանված պահանջները՝ առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք, հանրային սննդի կազմակերպում և իրացում և քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի 07.08.2026թ. կազմված թիվ ՆՊ-4, ՆՊ-5 և թիվ ՆՊ-6 արձանագրությունների հիման վրա 2026 թվականի օգոստոսի 7-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ

հոդվածի 1-ին, 7-րդ և 8-րդ մասերի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. Վաղարշապատի համայնքապետարանի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի աշխատակիցների կողմից 07.08.2026 թվականին կազմված թիվ ՆՊ4, ՆՊ5 և ՆՊ6 արձանագրությունները:

2. Հանձնաժողովի 18.08.2026թ. թիվ 22/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

3. «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր քաղվածքը:

4. «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ 23.02.2026թ.-ի դիմումը հանրային սննդի թույտվություն ստանալու վերաբերյալ:

5. «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ կողմից ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառքի իրականացնելու և հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու համար թույլտվությունների տրամադրման նպատակով կատարված տեղեկան տուրքի վճարումների անդորագրերը:

6. Համայնքի ղեկավարի 10.03.2026 թվականի թիվ 966 գրությունը, որով վերջինիս մերժվել է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու համար թույլտվության տրամադրումը, քանի որ ներկայացված փաստաթղթերի ցանկում բացակայում է «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ անունով տվյալ գործունեություն իրականացնելու հասցեի սեփականության իրավունքի վկայականը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 2/8 հասցեում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք, հանրային սննդի կազմակերպում և իրացում և քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի օգոստոսի 7-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-

ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 18-ին հրավիրվել է լսում:

«Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատերը ներկայանալով լսմանը հայտնել է, որ միջոցներ է ձեռնարկում վերացնելու առաջադրված իրավախախտումների հետևանքները: Մասնավորապես՝ գործունեության իրականացման տարածքի օրինականացման համար հավաքագրում է փաստաթղթեր և պատրաստակամություն է հայտնել սեղմ ժամկետներում առաջացած թերությունները վերացնելու ու գործունեությունների իրականացման համար թույլտվություններ ստանալու համար: Նաև խնդրել է, որ վարչական տույժ սահանելիս հաշվի առնել մեղմացնող հանգամանքները:

Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից ներկայացվեցին «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ 23.02.2026թ.-ի դիմումը հանրային սնունդի թույտվություն ստանալու վերաբերյալ, ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառքի իրականացնելու և հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու համար թույլտվությունների տրամադրման նպատակով կատարված տեղեկան տուրքի վճարումների անդորրագրերի պատճենները, ինչը վկայում է, որ «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատերը կատարել է անհրաժեշտ գործողությունները թույլտվությունները ստանալու նպատակով, ինչպես նաև ներկայացվեց համայնքի ղեկավարի 10.03.2026 թվականի թիվ 966 գրությունը, որով վերջինիս մերժվել է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու համար թույլտվության տրամադրումը, քանի որ ներկայացված փաստաթղթերի ցանկում բացակայում էր «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ անունով տվյալ գործունեությունը իրականացնելու հասցեի սեփականության կամ օրենքով սահմանված այլ իրավունքով օգտագործելու փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք մեղավոր անձի զղջումը և որոշ իրավախախտումների վնասակար հետևանքների կանխմանը ուղղված գործողությունները՝ Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց թույլտվության ոգելից և (կամ)

ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում իրականացնելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար, համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով տրվում է հանրային սննդի հասկացությունը, համաձայն որի հանրային սնունդը (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպումն է, իսկ հանրային սննդի ծառայությունը դա սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր է, նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում նշված օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Նույն օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը:

Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը:

Տվյալ դեպքում՝ «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատերը ձեռնարկել է միջոցներ համապատասխան թույլտվությունները ստանալու ուղղությամբ, վճարել է տեղական տուրքերի սահմանված դրույքաչափերը, ինչպես նաև պարտավորվել է վերացնել թերությունները ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում համապատասխան թույլտվությունները ստանալու նպատակով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելը և (կամ) մատուցելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Տվյալ դեպքում՝ «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատերը ստանալով Վաղարշապատ համայնքի ղեկավարի 10.03.2026 թվականի թիվ 966 գրությունը, որով վերջինիս մերժվել է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու համար թույլտվության տրամադրումը շարունակել է մատուցել նշված ծառայություններն առանց օրենքով սահմանված համապատասխան թույլտվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Այսպես՝ «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատերը, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Երևան մայրուղի 2/8 հասցեում կատարել է երեք վարչական իրավախախտումներ՝ առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք, առանց համապատասխան թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում և առանց թույլտվության իրականացրել է քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների մատուցում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին, 7-րդ և 8-րդ մասերով, 23-րդ, 25-րդ, 32-րդ և 35-րդ հոդվածներով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-ր, 12-րդ և 17-րդ կետերով, 18-րդ հոդվածի 1-ին մասով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.«Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով՝ առանց համապատասխան թույլտվության ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի և առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու համար:

2. «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք՝ առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու համար **1 000 000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամի** չափով:

3. Նախազգուշացնել «Գոռ Ասլանյան Նշանի» անհատ ձեռնարկատիրոջը, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինսնապատիկի չափով, իսկ նույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր

կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

2026-08-20 17:20:08 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1268-Ա

20 օգոստոսի 2026 թ. ք. Էջմիածին

ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «4×4» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ ՎԻ 24/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 1 հասցեում «4×4» ՍՊ ընկերության կողմից առանց համապատասխան թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

«4×4» ՍՊ ընկերությունը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Թումանյան փող., թիվ 0, պետ.գրանցման համար՝ 38.110.00062/1994-07-14, ՀՎՀՀ՝ 04700891, գործադիր մարմնի ղեկավար՝ Երվանդ Էդիկի Մկրտչյանին, հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Ղուկասյան փող., թիվ 9 տուն) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 1 հասցեում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերով սահմանված պահանջները՝ առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի 10.08.2026 թվականին կազմված թիվ ԱՍ 7 և ԱՍ 8 արձանագրությունների հիման վրա 2026 թվականի օգոստոսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում «4×4» ՍՊ ընկերություն գործադիր մարմնի ղեկավար Երվանդ Էդիկի Մկրտչյան մասնակցությամբ:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից 10.08.2026 թվականին կազմված թիվ ԱՍ 7 և ԱՍ 8 արձանագրությունները:

2. Հանձնաժողովի 20.08.2026թ. թիվ 24/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

3. «4×4» ՍՊ ընկերության ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր քաղվածքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«4×4» ՍՊ ընկերությունը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 1 հասցեում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի օգոստոսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 20-ին հրավիրվել է լսում:

Լսմանը ներկայացել է «4×4» ՍՊ ընկերություն գործադիր մարմնի ղեկավար Երվանդ Էդիկի Մկրտչյանը և հայտնել է, որ իրավախախտումները կվերացնի, շենք շինությունը կփոխադրի ըստ նպատակային նշանակության, որպեսզի ստանա համապատասխան

թույլտվությունները, ուստի խնդրում է իրավախախտման վերաբերյալ տույժ նշանակել նվազագույնս:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք իրականացնելը, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների իրացում իրականացնելը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ օրենքով նախատեսված դեպքերում համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար, համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով տրվում է հանրային սննդի հասկացությունը, համաձայն որի հանրային սնունդը (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպումն է, իսկ հանրային սննդի ծառայությունը դա սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր է, նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում նշված օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 35-րդ հոդվածի համաձայն՝ մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:

Տվյալ դեպքում՝ «4×4» ՍՊ ընկերությունը, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Թումանյան փողոցի թիվ 1 հասցեում կատարել է երկու վարչական իրավախախտումներ՝ առանց համապատասխան թույլտվության իրականացրել է ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և առանց համապատասխան թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերով, 23-րդ, 32-րդ և 35-րդ հոդվածներով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 12-րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «4×4» ՍՊ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք՝

1) առանց թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք իրականացնելու համար 100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով,

2) առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու համար՝ 80 000/ութսուն հազար/ ՀՀ դրամի չափով,

ընդհանուր՝ **180 000 /հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ:**

2. Նախազգուշացնել «4×4» ՍՊ ընկերությանը, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև չորսհարյուրապատիկի չափով, իսկ նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

Recoverable Signature

Ստորագրող՝
ԱՐԳՀՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: MEKHAKYAN ARGISHTI 3208860013 **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1269-Ա

20 օգոստոսի 2026 թ. | ք. Էջմիածին

ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ «ԱՐԹՈՒՐ ԱՇՈՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱԿԱՏԻՐՈՋԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ ՎԻ 25/26 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փող., թիվ 44 հասցեում «Արթուր Աշոտի Առաքելյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից առանց համապատասխան թույլտվության ոգելից և (կամ) ալկոհոլային խմիչքների վաճառք և հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու վերաբերյալ, պարզեց, որ

«Արթուր Աշոտի Առաքելյան» անհատ ձեռնարկատերը (հասցե՝ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Էջմիածին քաղաք, Շահումյան փող., թիվ 44 տուն, պետ.գրանցման համար՝ 38.02596/1999-08-17, ՀՎՀՀ՝52122792, անձնագիր՝ AL0678166, տրված 20.03.2024թ., 057-ի կողմից, ն/ք՝ 015793201) Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փող., թիվ 44 հասցեում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասերով սահմանված պահանջները՝ առանց համապատասխան թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում, ինչի կապակցությամբ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի 10.08.2026թ. կազմված թիվ ՎՀ-2 արձանագրության հիման վրա 2026 թվականի օգոստոսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և

հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, հրավիրել և անցկացրել է լսում, որի անցկացման վայրի և ժամանակի մասին «Արթուր Աշոտի Առաքելյան» անհատ ձեռնարկատերը պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի կողմից 10.08.2026թ. կազմված թիվ ՎՀ-2 արձանագրությունը:

2. Հանձնաժողովի 20.08.2026թ. թիվ 25/26 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 արձանագրությունը:

3.«Արթուր Աշոտի Առաքելյան» անհատ ձեռնարկատիրոջ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստր քաղվածքը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Արթուր Աշոտի Առաքելյան» անհատ ձեռնարկատերը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փող., թիվ 44 հասցեում առանց համապատասխան թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2026 թվականի օգոստոսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի օգոստոսի 20-ին հրավիրվել է լսում:

«Արթուր Աշոտի Առաքելյան» անհատ ձեռնարկատերը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված լինելով /հիմք՝ փոստային ծանուցագիր AL0134897994AM/ վարչական նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վարչական ակտ ընդունելու իրավական հիմքերը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպումը և իրացումը՝ առաջացնում են տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրք՝ համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար:

«Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

«Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով տրվում է հանրային սննդի հասկացությունը, համաձայն որի հանրային սնունդը (սննդի ապահովման ծառայություններ)՝ խոհարարական արտադրանքի պատրաստման, իրացման և (կամ) սպառման կազմակերպումն է, իսկ հանրային սննդի ծառայությունը դա սպառողների սննդի և հանգստի անցկացման պահանջների բավարարմանն ուղղված, վաճառողի միջոցով մատուցվող ծառայությունների համալիր է, նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ առևտրի և ծառայությունների ոլորտում նշված օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները:

Տվյալ դեպքում՝ «Արթուր Աշոտի Առաքելյան» անհատ ձեռնարկատերը, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Շահումյան փող., թիվ 44 հասցեում կատարել է վարչական իրավախախտում՝ առանց համապատասխան թույլտվության իրականացրել է հանրային սննդի կազմակերպում և իրացում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասով, 23-րդ, 32-րդ և 35-րդ հոդվածներով, «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Արթուր Աշոտի Առաքելյան» անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ նշանակել տուգանք՝ առանց թույլտվության հանրային սննդի կազմակերպում և իրացում իրականացնելու համար՝ **80 000 /ութսուն հազար/** ՀՀ դրամի չափով:

2. Նախազգուշացնել «Արթուր Աշոտի Առաքելյան» անհատ ձեռնարկատիրոջը, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169.16-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհիսնապատիկի չափով:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետի պահանջը չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

Ստորագրող
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ
3208860013

2026-06-20 17:33:06 GMT+4

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**